

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միքայել Մելքունյանի, Արծվիկ Մինասյանի, Թևան Պողոսյանի և Գագիկ Զհանգիրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-612-29.09.2014-ՏՀ-010/0 և Պ-612՝-29.09.2014-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է ձեռքբերումները պարտադիր փաստաթղթավորելու պահանջը սահմանել 2016 թվականի հունվարի 1-ից՝ մինչև այդ կիրառելով

փաստաթղթավորման կամավորության սկզբունքը և 1 տոկոս կամ 3.5 տոկոս դրույքաչափերի ընտրության հնարավորությունը:

Զուգահեռաբար, առաջարկվում է շրջանառության հարկ վճարող համարվելու շեմը 58.35 մլն դրամից բարձրացնել մինչև 150 մլն դրամի:

Օրենքների նախագծերն սկզբունքորեն անընդունելի են՝ հետևյալ նկատառումներով.

***Պարտադիր փաստաթղթավորման պահանջը 2016 թվականի հունվարի 1-ից կիրառելու վերաբերյալ.***

Արդեն իսկ մշակվել և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի քառօրյա օրակարգ է ներառվել համապատասխան օրենքի նախագիծ, որով առաջարկվում է առևտրական գործունեությամբ զբաղվող շրջանառության հարկ վճարողների կողմից իրենց ապրանքային մնացորդի վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմին ներկայացնելու վերջնաժամկետը (2014 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում) տեղափոխել մինչև 2015 թվականի փետրվարի 1-ը: Այսինքն, ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու գործընթացի սկսման հետ կապված խնդիրներն առաջարկվում է լուծել նշված օրենքի ընդունման շրջանակներում:

Այս առումով, ձեռքբերումները պարտադիր փաստաթղթավորելու պահանջի ձգձգումն անընդունելի է, քանի որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ 2014 թվականի հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով այդ գործընթացն արդեն իսկ սկսվել է, որի շրջանակներում նախատեսվում է սահուն ձևով ամրապնդել ձեռքբերումները փաստաթղթավորելու պահանջը:

***Շրջանառության հարկ վճարող համարվելու շեմը մինչև 150 մլն դրամ բարձրացնելու առաջարկության վերաբերյալ.***

Նախագծով առաջարկվում է շրջանառության հարկի շեմը բարձրացնել ոչ միայն առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով, այլ գործունեության բոլոր տեսակների մասով առհասարակ: Ընդ որում, առաջարկվում է շեմը բարձրացնել՝ անկախ այն հանգամանքից, թե առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող հարկ վճարողը հարկման որ կարգն է ընտրում՝ հարկի 3.5 տոկոս դրույքաչափ՝ ազատվելով ձեռքբերումները փաստաթղթավորելու օրենսդրական պահանջից, թե հարկի 1 տոկոս դրույքաչափ՝ պարտավորվելով պահպանել ձեռքբերումները փաստաթղթավորելու օրենսդրական պահանջը:

#### Առաջարկության ընդունման դեպքում՝

1) ավելի կխորանա առանց այդ էլ լայնորեն տարածված՝ արտադրողներից ու ներմուծողներից կատարվող ձեռքբերումների դիմաց դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերից հրաժարվելու խնդիրը: Մասնավորապես, եթե ներկայումս այդ խնդիրն առկա է առավելապես այն հարկ վճարողների մոտ, որոնք մոտ են գտնվում շրջանառության հարկի գործող՝ 58.35 մլն դրամ շեմին և հաշվարկային փաստաթղթերից հրաժարվում են իրենց հետագա իրացումները նվազեցնելու ակնկալիքով, ապա շրջանառության հարկի շեմի բարձրացման պարագայում այդպիսի վարքագիծ են սկսելու դրսևորել արդեն նոր՝ ավելի բարձր շեմին մոտ գտնվող ու մի քանի անգամ ավելի խոշոր տնտեսավարող սուբյեկտները: Ընդ որում, այն հանգամանքը, որ առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող հարկ վճարողներն այդպիսի վարքագիծ ունեն, հաստատվում է նաև նախագծի ընդունման հիմնավորմամբ: Մասնավորապես, նշվում է, որ որոշ գնահատումներով շրջանառության իրական ծավալները հայտարարագրվող ծավալները գերազանցում են 5-6, իսկ երբեմն էլ՝ 10-12 անգամ.

2) նախագծի ընդունման հիմնավորմամբ արտադրողներից ու ներմուծողներից կատարվող ձեռքբերումների դիմաց դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերից հրա-

ժարվելու հանգամանքը մեկնաբանվում է այլ տեսանկյունից և նշվում է, որ շրջանառության հարկի շեմի բարձրացման պարագայում ներկայումս շեմին մոտ գտնվող հարկ վճարողները կսկսեն հայտարարագրել իրենց իրացման շրջանառությունները, ինչի արդյունքում լրացուցիչ հարկվող օբյեկտներ կառաջանան: Նշված եզրահանգումը կատարելիս, սակայն, հաշվի չի առնվել այն կարևոր հանգամանքը, որ շրջանառության հարկի շեմի բարձրացման պարագայում ներկայումս ավելացված արժեքի հարկ վճարող համարվող շուրջ 9400 հարկ վճարողներից շուրջ 7000 հարկ վճարողներ կտեղափոխվեն շրջանառության հարկի համակարգ: Հետևաբար, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ շրջանառության հարկի համակարգը՝ որպես իրապես փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար նախատեսված հարկման համակարգ, ենթադրում է ավելի ցածր հարկային բեռի սահմանում, քան հարկման ընդհանուր համակարգում առաջացող հարկային բեռն է, ստացվում է, որ նախագծի ընդունումը ոչ թե դրական, այլ խիստ բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտների վրա: Մասնավորապես, մեր կողմից կատարված հաշվարկների համաձայն, նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտները կկրճատի տարեկան շուրջ 39 մլրդ դրամով.

3) թեև արտադրողներից ու ներմուծողներից կատարվող ձեռքբերումների դիմաց դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերից հրաժարվելու երևույթը լայն տարածում ունի, այդուհանդերձ մեր կողմից կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ձեռքբերումների ու իրացման շրջանառությունների իրապես փոքր ծավալներ ունեցող հարկ վճարողները (տարեկան մինչև 10 մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողներ, որոնք շրջանառության հարկի շեմը չգերազանցելու, հետևաբար նաև՝ ձեռքբերումներն ու իրացումները թաքցնելու խնդիր առանձնապես չունեն) կազմում են

շրջանառության հարկ վճարողների 81 տոկոսը, իսկ միայն առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվողների պարագայում՝ 82 տոկոսը: Հետևաբար, շրջանառության հարկի համակարգի շուրջ 2 տարիների կիրառության վիճակագրությամբ նույնպես շրջանառության հարկի շեմը շուրջ 3 անգամ բարձրացնելու առաջարկությունը որևէ կերպ չի հիմնավորվում: Այլ կերպ ասած՝ ստացվում է, որ նախագծի ընդունման նպատակադրումը ոչ թե փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին հասցեական օժանդակություն տրամադրելն է, այլ խոշոր ձեռնարկատիրության հատկանիշներով բնութագրվող հարկ վճարողների համար լիարժեք հարկումից խուսափելու հնարավորությունների ստեղծումն է.

4) շրջանառության հարկի շեմը շուրջ 3 անգամ բարձրացնելու պարագայում կտրուկ կընդլայնվեն խոշոր տնտեսավարող սուբյեկտների՝ արհեստականորեն տրոհվելու և շրջանառության հարկի համակարգից անհարկի ձևով օգտվելու հնարավորությունները: Մասնավորապես, եթե ներկայումս, օրինակ, տարեկան կտրվածքով 300 մլն դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտի տրոհվելու հնարավորությունները գործնականում շատ սահմանափակ են, քանի որ օգտվելու համար շրջանառության հարկի համակարգից այդ տնտեսավարող սուբյեկտը պետք է բաժանվի 5-6 տնտեսավարող սուբյեկտների, ապա առաջարկության ընդունման պարագայում բավարար կլինի պարզապես այդ տնտեսավարող սուբյեկտը 2 առանձին տնտեսավարող սուբյեկտների բաժանելը.

5) շրջանառության հարկի շեմի բարձրացումը չի հիմնավորվում նաև միջազգային փորձի տեսանկյունից: Մասնավորապես, շրջանառության հարկի շեմի վերանայման՝ նախկինում ներկայացված առաջարկությունների կապակցությամբ բազմիցս հայտնել ենք, որ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող շեմն աննախադեպ բարձր է ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև եվրոպական երկրներում կիրառվող նմանատիպ

շեմերի համեմատությամբ (շրջանառության հարկի կամ ավելացված արժեքի հարկի՝ միջազգային պրակտիկայում կիրառվող շեմերի մեծության վերաբերյալ տեղեկանքը կցվում է):

***Առևտրական (առք ու վաճառքի) գործունեության շրջանակներում կատարվող ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու կամավորության սկզբունքի վերաբերյալ.***

Առևտրական (առք ու վաճառքի) գործունեության շրջանակներում կատարվող ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու կամավորության սկզբունքի ներդրումը նույնպես համարում ենք ոչ նպատակահարմար՝ հետևյալ հիմնական նկատառումներով՝

1) ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու կամավորության սկզբունքի կիրառության նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ առաջարկվող մոտեցումը կենսունակ չէ և հեռանկար չունի: Մասնավորապես, մինչև 2009 թվականի հունվարի 1-ը կիրառության մեջ եղած՝ «Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառության որոշակի փուլում գործել է կատարվող ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու կամավորության սկզբունքը: Վերջինիս կիրառության փորձը, սակայն, ցույց է տվել, որ տնտեսությունում կատարվող գործարքների փաստաթղթավորման և սովերային շրջանառությունների դեմ պայքարի տեսանկյունից այդ մոտեցման արդյունավետությունը խիստ ցածր է: Այն գործնականում նշանակում է լրացուցիչ հաշվառման իրականացում, ինչը, սակայն, հնարավորություն չի ընձեռում լուծել գործարքների փաստաթղթավորման խնդիրը: Այդ նկատառումներով պայմանավորված՝ այս մեխանիզմը կիրառությունից հանվեց.

2) եթե նախագծի ընդունման նպատակը համահունչ է սովերային շրջանառությունների դեմ պայքարի՝ իրականացվող քաղաքականությանը և նպատակ ունի ապահովելու տնտեսության մեջ կատարվող գործարքների փաստաթղթավորման բարձր

մակարդակ, ապա նախագծի հիմքում պետք է դրվի ձեռքբերումների փաստաթղթավորման պարտադիր պահանջի գաղափարը, հակառակ պարագայում ստացվում է, որ նախագծի ընդունմամբ ընդամենը ձգձգվում է փաստաթղթավորման խնդրի լուծումը և մեծ հարված է հասցվում ստվերային շրջանառությունների դեմ պայքարի գործընթացին: Այդ առումով հասկանալի չէ նաև գործող օրենքը մինչև 2016 թվականի հունվարի 1-ը հետաձգելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող օրենքի կարգավորումները նախատեսում են սահուն անցում գործարքների փաստաթղթավորմանը.

3) մեր կողմից կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ հարկ վճարողները սովորաբար հայտարարագրում են այնքան իրացման շրջանառություն, որը համապատասխանում է նրանց մոտ առկա՝ ձեռքբերումները հիմնավորող փաստաթղթերին ու նրանց կողմից կիրառվող՝ առևտրային վերադիրների միջինացված մեծություններին: Իրական շրջանառությունները, սակայն, անհամեմատ ավելի մեծ են: Հետևաբար, ձեռքբերումները փաստաթղթերով հիմնավորելու կամավորության սկզբունքի կիրառությունը չի կարող արդյունավետ գործիք լինել իրացման շրջանառությունների իրական մեծությունների հայտարարագրումն ապահովելու և դրանով իսկ՝ ստվերային շրջանառությունները բացահայտելու տեսանկյունից.

4) ձեռքբերումների փաստաթղթավորման կամավորության սկզբունքի կիրառությունը որևէ կերպ չի նպաստի իրապես փոքր հարկ վճարողներին բացահայտելու և նրանց համար հասցեական աջակցության ծրագրեր և ավելի մեղմ հարկային համակարգեր ներդնելու քաղաքականությանը: Այլ կերպ ասած՝ քանի դեռ իրապես փոքր հարկ վճարողները հստակ բացահայտված ու առանձնացված չեն իրացման շրջանառություններ թաքցնող ու փոքր շրջանառություններ հայտարարագրող հարկ վճարողներից, քանի դեռ սահմանափակված չեն փոքր հարկ վճարողների խմբում արհեստականորեն «տեղավորվելու» հնարավորությունները, փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների

հարկման համակարգի հետագա բարելավումները խիստ վտանգավոր են, քանի որ քաղաքականության այդ ուղղությունն իրական հասցեատերերին առանձնապես չի օժանդակի, փոխարենը, սակայն, հարկման արտոնյալ պայմաններից կօգտվեն ավելի խոշոր տնտեսավարող սուբյեկտները՝ հանգեցնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտների կորստի.

5) ձեռքբերումների փաստաթղթավորման խնդրի օպտիմալ լուծում մշակելու նպատակով մեր կողմից ուսումնասիրվել է այս ոլորտի միջազգային փորձը: Ուսումնասիրության արդյունքների ընդհանրացմամբ կարելի է նկատել, որ բոլոր այն երկրները, որոնք կիրառում են ձեռքբերումները փաստաթղթավորելու կամավորության սկզբունք, զուգահեռաբար կիրառում են հարկման այլընտրանքային համակարգերից դուրս գալու և հարկման ընդհանուր համակարգ տեղափոխվելու տարբեր սահմանափակումներ՝ կապված ապրանքային մնացորդների հետ: Մասնավորապես, Վրաստանի պարագայում գործում է հետևյալ կարգավորումը. առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող՝ փոքր բիզնեսի սուբյեկտները ձեռքբերումները փաստաթղթավորում են կամավորության սկզբունքով, և եթե համախառն եկամտի ու աշխատավարձի ֆոնդի տարբերության առնվազն 60 տոկոսը հիմնավորվում է փաստաթղթերով, հարկի դրույքաչափը 5 տոկոսից նվազում է 3 տոկոս: Փոխարենը, սակայն, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված է այս խմբի հարկ վճարողների մոտ առկա ապրանքային մնացորդի թույլատրելի առավելագույն չափ: Մասնավորապես, եթե տարվա ընթացքում՝ որևէ պահի դրությամբ, այդ մնացորդը գերազանցում է 150 հազ. վրացական լարին (շուրջ 36.5 մլն դրամ), ապա փոքր բիզնեսի ներկայացուցիչը, անկախ իրացման շրջանառության մեծությունից, տեղափոխվում է հարկման ընդհանուր համակարգ: Հատկանշական է այն, որ այս խմբի հարկ վճարողների մոտ ապրանքային մնացորդի մեծության նկատմամբ հսկողությունն անխուսափելիորեն ենթադրում է առանց սահմանափակման ստուգումների, ուսումնաս-



սիրությունների և գույքագրումների իրականացում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների մոտ, ինչն անհարկի անհանգստություն է պատճառում այս խմբի հարկ վճարողներին: Հաշվի առնելով նշված նկատառումները՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է շրջանառության հարկի՝ վարչարարության ու հարկային հաշվառման տեսանկյունից անհամեմատ առավել պարզեցված համակարգ:

6) ձեռքբերումները փաստաթղթավորելու կամավորության սկզբունքի ներդրմամբ որևէ խնդիր չի լուծվի: Մասնավորապես, նախագծի ընդունման արդյունքում կստացվի, որ շրջանառության հարկի դրույքաչափը 3.5 անգամ իջեցվում է այն հարկ վճարողների համար, որոնք, այսպես թե այնպես, կարողանում են փաստաթղթավորել իրենց ձեռքբերումները, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն տարեկան կտրվածքով կրում է 4-6 մլրդ դրամ հարկային եկամուտների կորուստ, ինչը որևէ կերպ չի փոխհատուցվում արտադրողների կամ ներմուծողների կողմից հայտարարագրվող լրացուցիչ շրջանառությունների հաշվին: Այլ կերպ ասած՝ ստացվում է, որ նախագծի ընդունմամբ նվազեցվում է հարկային բեռն այն հարկ վճարողների համար, որոնք օբյեկտիվորեն մշտապես ունեն ձեռքբերումները հիմնավորող փաստաթղթեր, փոխարենը դրա հետևանքով առաջացող՝ հարկային եկամուտների կորուստը չի փոխհատուցվում չփաստաթղթավորված շրջանառությունների կրճատման հաշվին:

Միաժամանակ, հայտնում ենք, որ նախագծերում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից

գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վախթանգ Միրումյանը:

Օրենքների նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում  
ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների  
նախագծերի**

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի  
Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության  
բնագավառում կարգավորման**

1. «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **ընդհանուր առմամբ դրական ազդեցություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ** Նախագծով շրջանառության հարկ վճարող համարվելու շեմը բարձրացվում է 58,35 մլն ՀՀ դրամից մինչև 150 մլն ՀՀ դրամ, ինչպես նաև մինչև 2016թ. հունվարի 1-ը՝ առևտրական գործունեության ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն է տրվում ընտրել առաջարկվող երկու տարբերակներից մեկը՝ 1 տոկոս շրջանառության հարկի դրույքաչափ ապրանքների ձեռքբերման փաստաթղթերի պարտադիր հաշվառմամբ կամ 3.5 տոկոս շրջանառության հարկի դրույքաչափ՝ առանց ապրանքների ձեռքբերման փաստաթղթերի հաշվառման, ինչը տնտեսվարող սուբյեկտների համար հարկային բեռի տեղաբաշխում կապահովի վարչարարական և ֆինանսական առումներով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ բարձրացվում է շրջանառության հարկ վճարող համարվելու համար շեմը, ինչպես նաև առևտրական գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողները պետք է մինչև 2014 թվականի հոկտեմբերի 31-ը՝ 2014 թվականի համար և 2015 թվականի հունվարի 20-ը՝ 2015 թվականի համար, իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնեն վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

### Եզրակացություն

**«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **դրական ազդեցություն**:

### ՀԱՎԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**««Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

««Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների Նախագծերի փաթեթի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերի փաթեթի ընդունման դեպքում պետական բյուջեի եկամուտների կորուստը կարող է կազմել 43-45 մլրդ դրամ:

Միաժամանակ Նախագծերի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի, ինչպես նաև ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-612-29.09.2014-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-236 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝

- 1) երկրորդ մասի «58,35 մլն դրամը:» բառերը փոխարինել «150 մլն դրամը:» բառերով.
- 2) երրորդ մասի 6-րդ կետում «58,35 մլն դրամը.» բառերը փոխարինել «150 մլն դրամը.» բառերով.
- 3) լրացնել 2.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Առետրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողները մինչև 2014 թվականի հոկտեմբերի 31-ը՝ 2014 թվականի համար եւ մինչև 2015 թվականի հունվարի 20-ը՝ 2015 թվականի համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեռով շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:»

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածում՝

- 1) առաջին պարբերության 2-րդ կետում «58,35 մլն դրամը.» բառերը փոխարինել «150 մլն դրամը.» բառերով.
- 2) չորրորդ պարբերությունում «Եթե առետրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ» բառերը փոխարինել «Եթե առետրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող եւ իրենց հաշվառման վայրի հարկային մարմին վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեռով շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողի մոտ» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 7-րդ հոդվածում՝

- 1) առաջին մասի աղյուսակը ներկայացնել հետևյալ խմբագրությամբ.

Եկամուտների տեսակը	Դրույքաչափը
Առետրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ, որոնց դեպքում ձեռքբերված ապրանքները ամբողջությամբ հիմնավորված են փաստաթղթերով	1%
Առետրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ, որոնց դեպքում ձեռքբերված ապրանքները ամբողջությամբ կամ մասամբ հիմնավորված չեն փաստաթղթերով	3.5%
Արտադրական գործունեությունից եկամուտներ	3.5%
Վարձակալությունից եկամուտներ, տոկոսներ, ռոյալթիներ, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտներ	10%
Նոտարական գործունեությունից եկամուտներ	20%
Այլ գործունեության (եկամուտների) տեսակներից եկամուտներ	5%

**Հողված 4.** Օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն պարտավորությունը տարածվում է շրջանառության այն հարկ վճարողների վրա, ովքեր իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեռով շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:»

**Հողված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում վերադաս հարկային մարմինը սահմանում է շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձեւը:

Սույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետի, 2-րդ հոդվածի 2-րդ կետի, 3-րդ եւ 4-րդ հոդվածների դրույթները տարածվում են մինչեւ 2016 հունվարի 1-ը ծագող հարաբերությունների վրա:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-612՝-29.09.2014-S<-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հողված 1.** «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հավելվածի առաջին մասը «առետրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող» բառերից հետո լրացնել «եւ իրենց հաշվառման վայրի հարկային մարմին վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեռով շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած» բառերով:

**Հողված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից եւ տարածվում մինչեւ 2016 հունվարի 1-ը ծագող հարաբերությունների վրա:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

2014 թվականի հոկտեմբերի 1-ից գործող «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները էական եւ օբյեկտիվ դժվարություններ են առաջացնում փոքր եւ միջին տնտեսավարող սուբյեկտների համար, ինչն, ըստ էության, հիմնականում պայմանավորված չէ նրանց գործունեությամբ, այլ թելադրված է խոշոր տնտեսավարող սուբյեկտների գործունեության առկա առանձնահատկություններով եւ պետության՝ նրանց նկատմամբ իրականացվող վարչարարության մակարդակով:

Ուստի ներկայացվող օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է վերոնշյալ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Նախագծով առաջարկվում է շրջանառության հարկ վճարող համարվելու շեմը բարձրացնել 58,35 մլն ՀՀ դրամից մինչեւ 120 մլն ՀՀ դրամ, ինչը կարծում ենք էականորեն կավելացնի բյուջետային



մուտքերը շրջանառության հարկի գծով, քանի որ առկա իրողությամբ տնտեսավարողների այն մտավախությունը, որ գերազանցելով 58,35 մլն ՀՀ դրամի շեմը կարող են անցնել հարկման այլ՝ ավելացված արժեքի հարկի ռեժիմ, թույլ չի տալիս ներկայացնելու շրջանառության իրական ծավալները: Որոշ գնահատումներով շրջանառության իրական ծավալները գերազանցում են ներկայացվող ծավալները 5-6 անգամ, երբեմն նույնիսկ՝ 10-12 անգամ: Ուստի, վերոնշյալ 58,35 մլն ՀՀ դրամ շեմը սահմանելով մոտավորապես երկու անգամ բարձր, բյուջետային մուտքերը շրջանառության հարկի գծով եւս կավելանան առնվազն երկու անգամ, իսկ գործող սահմանաչափի մեծությունը կհամահարթեցվի թե՛ «Հաշվապահական հաշվառման մասին», թե՛ «Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՓՄՁ չափորոշիչներին:

Նախագծով առաջարկվում է նաեւ, որպես անցումային փուլ, մինչեւ 2016թ. հունվարի 1-ը՝ առեւտրական (առք ու վաճառքի) գործունեության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների համար կիրառել շրջանառության հարկի հարկային դրույքաչափի ընտրության կամավորության սկզբունք. մասնավորապես՝ տնտեսավարողին հնարավորություն տալ ընտրելու առաջարկվող երկու տարբերակներից մեկը՝ 1% շրջանառության հարկի դրույքաչափ, բայց ձեռքբերված ապրանքների ամբողջությամբ հիմնավորվածություն փաստաթղթավորմամբ կամ 3.5% շրջանառության հարկի դրույքաչափ՝ առանց ապրանքների ձեռքբերման:

«Շրջանառության հարկի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ փաստաթղթավորման պահանջի կամավոր ընտրության ինստիտուտի ներդրումն իր հերթին պահանջում է հարկային բեռի ճիշտ եւ արդարացի տեղաբաշխում վարչարարական եւ ֆինանսական առումներով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ թե՛ տնտեսական, թե՛ իրավական առումներով նպատակահարմար կլինի համապատասխան վարչարարություն կիրառել միայն նվազեցված դրույքաչափով կամավորության սկզբունքով գործունեություն ծավալող տնտեսավարողների նկատմամբ՝ այդ կերպ փոխակերպելով 2.5% ֆինանսական բեռի տարբերությունը վարչարարական բեռով:

Ուստի, ներկայացվող օրենքի նախագծով առաջարկվում է օրենքի N 5 հավելվածով հսկողական միջոցառումներ իրականացնել միայն այն տնտեսավարողների մոտ, որոնք կամավոր կերպով ընտրել են առեւտրական (առք ու վաճառքի) գործունեություն եկամուտներից շրջանառության նվազեցած՝ 1% դրույքաչափով հարկ վճարելու տարբերակը:

Այսպիսի տարբերակված մոտեցման կիրառումը էապես կբարձրացնի գործարար ակտիվության մակարդակն եւ հարկային բեռի արդարացի տեղաբաշխում կապահովի վարչարարական եւ ֆինանսական առումներով:

## ՀՀ ՕՐԵՆՔԸ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

### Հոդված 4. Շրջանառության հարկ վճարողները

1. Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող են համարվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները (այսուհետ՝ անձինք):

2. Շրջանառության հարկ վճարողներ են համարվում անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի (այսուհետ՝ իրացման շրջանառություն), չի գերազանցել 58,35 150 մլն դրամը: Սույն դրույթի կիրառման առումով իրացման շրջանառությունը ներառում է նաև հաստատագրված վճարներով և (կամ) արտոնագրային վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը), իսկ առևտրային կազմակերպության վերակազմակերպման (միացում, միաձուլում, առանձնացում, բաժանում,

վերակազմավորում) դեպքում գործող կազմակերպության (կազմակերպությունների) իրացման շրջանառության հաշվարկման համար հիմք են ընդունվում վերակազմակերպմանը մասնակցող բոլոր կազմակերպությունների նախորդ օրացուցային տարվա իրացման շրջանառությունները:

2.1. «Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողները մինչև 2014 թվականի հոկտեմբերի 31-ը՝ 2014 թվականի համար եւ մինչև 2015 թվականի հունվարի 20-ը՝ 2015 թվականի համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեռով շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:»

3. Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

1) «Հաստատագրված վճարների մասին» և (կամ) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն հաստատագրված վճար և (կամ) արտոնագրային վճար վճարող անձինք՝ գործունեության այդ տեսակների մասով.

2) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները և (կամ) ներմուծողները.

3) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, գյուղատնտեսական արտադրանք արտադրողները, աուդիտորական ընկերությունները, հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները.

4) առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, եթե՝

ա. առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին,

բ. առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է այն անձին, որին միաժամանակ պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը),

գ. առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը).

5) երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա՝ ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով վերադաս հարկային մարմնի սահմանած կարգով բացառապես վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված անձինք, եթե նրանց ընդհանուր իրացման շրջանառությունը գերազանցում է 58,35 մլն դրամը.

6) համատեղ գործունեության պայմանագրի, ապրանքների մատակարարման կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող անձինք:

4. Հարկ վճարողները համարվում են շրջանառության հարկ վճարող գործունեության բոլոր տեսակների մասով, բացառությամբ այն տեսակների, որոնք հարկվում են հաստատագրված վճարներով և (կամ) արտոնագրային վճարներով:

5. Սույն օրենքի իմաստով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպություններ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները:

(4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը 21.06.14 [ՀՕ-128-Ն](#) օրենքի փոփոխությամբ և լրացմամբ ուժի մեջ կմտնեն 01.01.2015 թ.)

#### **Հոդված 5. Շրջանառության հարկի գործողության դադարումը**

Շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, եթե՝

1) «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գրավոր հայտարարություն է ներկայացրել իր հաշվառման վայրի հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից)։

2) ընթացիկ տարում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը գերազանցել է **58,35 150** մլն դրամը։

3) իրականացրել է սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված գործունեություն՝ այդ փաստը տեղի ունենալու պահից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը։

4) տեղի է ունեցել սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կամ 6-րդ կետում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու պահից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը։

5) տեղի է ունեցել սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետում նշված փաստը՝ փոխկապակցված ճանաչելու մասին վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշումը ստանալու պահից այնքան ժամանակ, քանի դեռ այդ որոշումը դատարանի վճռով չեղյալ չի համարվել:

Մինչև հարկային մարմնի ղեկավարի որոշումը ստանալը (ԱԱՀ վճարող համարվելը) ընկած ժամանակահատվածի համար հարկային պարտավորությունների վերահաշվարկներ չեն կատարվում:

Անձանց փոխկապակցված ճանաչելու մասին վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշումը դատարանի վճռով չեղյալ համարվելու դեպքում որոշման գործողության ժամանակաշրջանի համար կատարվում է հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

Եթե առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ եթե առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող եւ իրենց հաշվառման վայրի հարկային մարմնի վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեռով շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողի մոտ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում

արձանագրվել է ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում, ապա՝

1) 2014 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում չորրորդ անգամ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից (բացառությամբ սույն հոդվածի հինգերորդ պարբերությամբ սահմանված դեպքերի) հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող (անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից) տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

2) 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում երրորդ անգամ ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից (բացառությամբ սույն հոդվածի հինգերորդ պարբերությամբ սահմանված դեպքերի) հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող (անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից) տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

3) 2016 թվականի և դրան հաջորդող յուրաքանչյուր տարվա ընթացքում ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի կրկնակի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից (բացառությամբ սույն հոդվածի հինգերորդ պարբերությամբ սահմանված դեպքերի) հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

Եթե «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջը խախտված լինելու մասին ստուգման ակտը կամ ստուգում իրականացնող անձանց գործողությունները սահմանված կարգով բողոքարկվել են, ապա դիմում-գանգատը մերժվելու մասին որոշումը պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է հանդիսանալ շրջանառության հարկ վճարող և համարվում է ԱԱՀ վճարող (անկախ ԱԱՀ-ի շեմը չգերազանցելու հանգամանքից) տվյալ տարում և դրան հաջորդող մեկ տարում: Դիմում-գանգատը բավարարվելու կամ դիմում-գանգատը մերժելու վերաբերյալ որոշումը դատական կարգով չեղյալ ճանաչվելու դեպքերում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողը շարունակում է համարվել շրջանառության հարկ վճարող այն պահից, որ պահից, ստուգման ակտի համաձայն, դադարել էր համարվել շրջանառության հարկ վճարող:

Սույն հոդվածի առաջին պարբերության 2-4-րդ կետերով սահմանված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու պահից (օրվանից) մինչև այդ օրվան հաջորդող 30-րդ օրը հարկ վճարողը իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում միասնական հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և պահը (օրը):

*(5-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետը 21.06.14 [ՀՕ-128-Ն](#) օրենքի խմբագրությամբ ուժի մեջ կմտնի 01.01.2015 թ.)*

*(5-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-128-Ն)*

**Հոդված 7. Շրջանառության հարկի դրույքաչափերը և հաշվարկումը**

1. Շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար շրջանառության հարկը հաշվարկում են հարկվող օբյեկտի նկատմամբ հետևյալ դրույքաչափերով, եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ՝

Եկամուտների տեսակը	Դրույքաչափը
Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ	1%
Արտադրական գործունեությունից եկամուտներ	3.5%
Վարձակալությունից եկամուտներ, տոկոսներ, ոռոյալթիներ, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտներ	10%
Նոտարական գործունեությունից եկամուտներ	20%
Այլ գործունեության (եկամուտների) տեսակներից եկամուտներ	5%

Եկամուտների տեսակը	Դրույքաչափը
Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ, որոնց դեպքում ձեռքբերված ապրանքները ամբողջությամբ հիմնավորված են փաստաթղթերով	1%
Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ, որոնց դեպքում ձեռքբերված ապրանքները ամբողջությամբ կամ մասամբ հիմնավորված չեն փաստաթղթերով	3.5%
Արտադրական գործունեությունից եկամուտներ	3.5%
Վարձակալությունից եկամուտներ, տոկոսներ, ոռոյալթիներ, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտներ	10%
Նոտարական գործունեությունից եկամուտներ	20%
Այլ գործունեության (եկամուտների) տեսակներից եկամուտներ	5%

1.1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 3.1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքում խախտման օրվան հաջորդող օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրն ընկած ժամանակահատվածի համար (շրջանառության հարկի հաշվարկը ներկայացնելով այդ ժամանակահատվածի համար), իսկ 2-րդ կետի «բ» ենթակետով և 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքերում խախտման օրը ներառող և մինչև տվյալ տարվա ավարտն ընկած հաշվետու ժամանակահատվածների համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտների համար շրջանառության հարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի նկատմամբ 5 տոկոս դրույքաչափով:

2. Շրջանառության հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը:

3. Հարկ վճարողները շրջանառության հարկի գումարների հաշվարկումը կատարում են ինքնուրույն, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով՝ սույն հոդվածի 1-ին մասով,

իսկ սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքերում՝ 1.1-ին մասով սահմանված դրույքաչափերով:

(7-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.06.14 ՀՕ-128-Ն)

**Հոդված 12. Շրջանառության հարկ վճարողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը և առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքերի վարումը**

1. Շրջանառության հարկ վճարողներն իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների գծով գնորդներին (ծառայություններից օգտվողներին) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Շրջանառության հարկ վճարողներն իրենց կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի վերաբերյալ նշում չեն կատարում (հարկային հաշիվ դուրս չեն գրում):

3. Շրջանառության հարկ վճարողները «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 4-ով նախատեսված՝ առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր չեն վարում:

4. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողները պարտավոր են, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, փաստաթղթավորել բոլոր ապրանքներ ձեռք բերելու գործարքները:

«Սույն պարտավորությունը տարածվում է շրջանառության այն հարկ վճարողների վրա, ովքեր իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեռով շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:»

(12-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-128-Ն)

**ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ-ՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

**Հավելված 5**

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»**

**Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ԱՌԵՎՏՐԱԿԱՆ (ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՓԱՏՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԱԾ ՈՒ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ ՓԱՏՏԱԹՈՒՂԹ ՉՏՐԱՄԱԴՐԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՈՒ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԿԱՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Սույն կարգով սահմանվում է «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող **եւ իրենց հաշվառման վայրի հարկային մարմին վերադաս**

հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեռք շրջանառության 1% դրույքաչափով հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ

վճարողների մոտ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման, ինչպես նաև շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների ճշտման ստուգումների իրականացման կարգը:

2. Ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման ստուգումը սույն հավելվածին համապատասխան իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների մոտ ապրանքներ ձեռք բերելու փաստաթղթավորման համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

3. Շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների ճշտման ստուգումը սույն հավելվածին համապատասխան իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի կողմից իրեն ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներկայացված հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների հիման վրա ձեռք բերված համապատասխան ապրանքների առկայությունը:

4. Տնտեսավարող սուբյեկտների մոտ սույն կարգին համապատասխան ստուգումներն իրականացվում են սույն օրենքին համապատասխան իրապարակված հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են ստուգման հիմքերը, նպատակը, ստուգման հարցերը, ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածը, տնտեսավարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), ստուգում իրականացնելու վայրը, ժամկետները և ստուգում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձանց տվյալները (պաշտոնը, անունը, ազգանունը):

5. Հանձնարարագրի երկու օրինակը ստուգումը փաստացի սկսվելու օրը տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին): Վերջինս պարտավոր է ստորագրել մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգում իրականացնելու մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է այն ներկայացնող պաշտոնատար անձանց:

6. Հարկային մարմնի պաշտոնատար անձինք ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման ստուգումը սկսելու օրը տնտեսավարող սուբյեկտի մոտ ընտրում են վաճառքի վայրում առկա մինչև 30 անուն ապրանքատեսակ, որոնց մասով պետք է իրականացվի ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման ստուգում: Ընտրված ապրանքատեսակների ցանկի վերաբերյալ հարկային մարմնի պաշտոնատար անձինք կազմում են արձանագրություն, որը պարտավոր են ստորագրել ստուգում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձինք և տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը): Ստուգման ընթացքում հարկային մարմնի պաշտոնատար անձինք իրավունք չունեն իրականացնելու արձանագրությունում չնշված ապրանքատեսակների մասով ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման ստուգում:

7. Ստուգման ընթացքում հարկային մարմնի պաշտոնատար անձինք պահանջում են ընտրված ապրանքատեսակների համար ներկայացնել դրանց ձեռք բերելը հիմնավորող փաստաթղթերը և տեղեկություններ վաճառքի վայրում առկա՝ դրանց մնացորդների վերաբերյալ:

8. Տնտեսավարող սուբյեկտի մոտ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման՝ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները համարվում են խախտված, եթե՝

1) բացակայում է ընտրված ապրանքատեսակներից որևէ մեկը ձեռք բերելու փաստաթուղթը:

2) հարկ վճարողի ներկայացրած փաստաթուղթը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, կամ խախտված են այդ փաստաթղթերի համար սահմանված վավերապայմանները.

3) եթե տվյալ ապրանքատեսակի առկա քանակային մնացորդը գերազանցում է փաստաթղթավորման պահանջը բավարարող ձեռք բերելու փաստաթղթերով ձեռք բերված քանակներին (հաշվի առնելով նաև նախկինում սույն կարգին համապատասխան իրականացված ստուգման ժամանակ արձանագրված տվյալները).

4) եթե ներկայացվում է տվյալ ապրանքատեսակի արտադրության ժամկետին նախորդող, բայց նույն ապրանքատեսակին վերաբերող ձեռք բերելու փաստաթուղթ (այն ապրանքատեսակների համար, որոնց տարայի վրա նշված է արտադրության ժամկետ).

5) հարկային մարմնի պաշտոնատար անձանց պահանջով ստուգման նպատակներին առնչվող տեղեկատվությունը կամ անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվելը հիմք է հանդիսանում արձանագրելու, որ տնտեսավարող սուբյեկտի մոտ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջները խախտված են:

Սույն կետի կիրառման իմաստով, ապրանք ձեռք բերելու միակողմանի գնման ակտը չի համարվում ապրանքներ ձեռք բերելու գործարքները հաստատող փաստաթուղթ: Սույն կետի դրույթները չեն տարածվում հետևյալ գործարքների վրա՝

ա. Հայաստանի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի ձեռք բերում,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված երկրորդային հումքի ձեռք բերում:

9. Ստուգման արդյունքներն արտացոլվում են երկու օրինակից կազմվող ակտում (ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում հայտնաբերվելու դեպքում) կամ արձանագրությունում (ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում չհայտնաբերվելու դեպքում), որը պարտավոր են ստորագրել ստուգում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձինք և տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը): Ստուգման արդյունքներով կազմվող ակտի կամ արձանագրության ձևը սահմանվում է վերադաս հարկային մարմնի ղեկավարի հրամանով: Ակտում կամ արձանագրությունում նշվում են՝

1) համարը, կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

2) ստուգում նշանակելու մասին հանձնարարագրի ամսաթիվն ու համարը.

3) ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց պաշտոնը, անունը, ազգանունը.

4) ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև վերջինիս պաշտոնատար անձի կամ նրան փոխարինող անձի անունը, ազգանունը.

5) ստուգում անցկացնելու ամսաթիվը, վայրը, ժամկետը և ժամանակահատվածը.

6) ստուգման շրջանակներում ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջը կատարված լինելու կամ պահանջը խախտված լինելու մասին գրառում՝ նշելով այն ապրանքատեսակների տվյալները, որոնց մասով խախտված են եղել ապրանքներ ձեռք բերելու փաստաթղթավորման պահանջները, խախտումների նկարագրությունը, խախտում պարունակող փաստաթղթերի վավերապայմանները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել.

7) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունների ընդունման վերաբերյալ նշումները.

8) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների հաշվարկը, եթե հայտնաբերվել է ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում:

10. Շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների ճշտման ստուգումն իրականացվում է հայտարարագիրը ստանալու կամ տվյալները մուտքագրվելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որի



Ժամանակ ստուգվում են «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներկայացված հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների հիման վրա ձեռք բերված համապատասխան ապրանքատեսակների առկայությունը վաճառքի վայրում, որի արդյունքներն արտացոլվում են երկու օրինակից կազմվող արձանագրությունում: Արձանագրությունը պարտավոր են ստորագրել ստուգում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձինք և տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը): Ստուգման արդյունքներով կազմվող արձանագրության ձևը սահմանվում է վերադաս հարկային մարմնի ղեկավարի հրամանով: Արձանագրությունում նշվում են՝

1) համարը, կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

2) ստուգում նշանակելու մասին հանձնարարագրի ամսաթիվն ու համարը.

3) ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը.

4) ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև վերջինիս պաշտոնատար անձի կամ նրան փոխարինող անձի անունը, ազգանունը.

5) ստուգում անցկացնելու ամսաթիվը, վայրը, ժամկետը և ժամանակահատվածը.

6) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներկայացված հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների հիման վրա ձեռք բերված համապատասխան ապրանքների առկայության կամ բացակայության մասին գրառումը.

7) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունների ընդունման վերաբերյալ նշումները:

Սույն կետով նախատեսված ստուգման ընթացքում կարող է ստուգվել բացառապես «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներկայացված հայտարարագրի կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների հիման վրա ձեռք բերված համապատասխան ապրանքատեսակների առկայությունը:

11. Սույն կարգով իրականացված ստուգումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով:

12. Ստուգում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) կողմից ստորագրված ակտի կամ արձանագրության օրինակները ստուգումը փաստացի սկսելու օրվա ընթացքում ներկայացվում են տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իր ստորագրած ակտի կամ արձանագրության մեկ օրինակը հանձնում է ստուգում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձին (անձանց), իսկ ակտի կամ արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում դրա մասին նշում է կատարում ակտում կամ արձանագրությունում՝ ակտին կամ արձանագրությանը կից հարկային մարմնի պաշտոնատար անձին ներկայացնելով իր գրավոր առարկությունները կամ ակտը կամ արձանագրությունը ստանալուց հետո իր գրավոր առարկությունները պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է հարկային մարմին: Ակտի կամ արձանագրության օրինակը ստանալուց կամ այն ստորագրելուց հրաժարվելու դեպքում ստուգում իրականացրած պաշտոնատար անձինք այդ մասին համապատասխան նշում են կատարում ակտում կամ արձանագրությունում, և այն տնտեսավարող սուբյեկտին է ուղարկվում փոստով:

13. Ստուգման արդյունքներով կազմված ակտերը և (կամ) արձանագրությունները ժամանակագրական կարգով հաշվառվում են տնտեսավարող սուբյեկտի հարկային գործում, որի տվյալները հաշվի են առնվում նույն ապրանքատեսակի մասով տնտեսավարող սուբյեկտի մոտ սույն կարգին համապատասխան հաջորդ ստուգման ժամանակ:

14. Ստուգումն իրականացնող անձանց գործողությունները, ինչպես նաև ստուգման արդյունքում կազմված ակտը կամ արձանագրությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող են սահմանված կարգով բողոքարկվել: Բողոքները վերադասության կարգով քննության են

առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքը վերադաս  
հարկային մարմին մուտքագրվելու օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:  
**(հավելվածը լրաց. 21.06.14 ՀՕ-130-Ն)**